ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2015թ. ՀՊՄՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման

Ներածություն. Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը (այսուհետ՝ Համալսարան), ղեկավարվելով ՀՀ սահմանադրությամբ, ՀՀ օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 10-ի N14 արձանագրային որոշման 51-րդ կետով հաստատված «Հանրային կառավարման համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի հայեցակարգին հավանություն տալու մասին» որոշմամբ և համապատասխան ծրագրով, այլ իրավական ակտերով, ներառյալ՝ Համալսարանի կանոնադրությամբ և ռազմավարական ծրագրով, հաշվետու ժամանակաշրջանում իրականացրել է բուհի առաքելությունից, զարգացման ծրագրերից, բնութագրերից և հեռապատկերից բխող հակակոռուպցիոն ծրագիր:

Համալսարանի կառավարման համակարգը 2015թ. ապահովել է բուհի ֆինանսական կայունությունը, երաշխավորել է ընդունված զարգացման ծրագրերի հաջող իրականացումը:

Նպատակ. Համալսարանի հակակոռուպցիոն ծրագրի իրականացման նպատակն է կոռուպցիոն ռիսկերի էական կրճատմամբ նշանակալիորեն սահմանափակել դրա ռիսկերը, հնարավոր տարածվածության աստիճանը, բարձրացնել Համալսարանում մատուցվող հանրային ծառայությունների որակը, զգալիորեն բարելավել սոցիալական արդարության ընկալումը, ամրապնդել բուհի մրցունակությունը և գրավչությունը ներդրումների համար կրթության և գիտության ոլորտների ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկայում:

Արտաքին և ներքին գործոններ. Հակակոռուպցիոն ռազմավարության մշակման և իրականացման ընթացքում հաշվի են առնվել Համալսարանի կառավարման կառուցվածքի անհամապատասխանությունը արտաքին միջավայրին և դրա փոփոխությանը ու Համալսարանի ռազմավարական նպատակներին: Որպես ներքին գործոններ են դիտվել և դիտվում նաև Համալսարանի կառավարման գործընթացում նորարական գաղափարները իրականացնելիս պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի ոչ լիարժեք պատրաստվածությունը և ներգրավվածությունը, Համալսարանի ընդհանուր տեղեկատվական բազայի ոչ լիարժեքությունը և կրթության կառավարման գործընթացներում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ու տեղեկատվության փոխանցման օպերատիվության դեռևս ոչ բավարար մակարդակը, աշխատավարձի բարձրացման խնդիրը:

Հիմնական ուղղություններ. բուհի հակակոռուպցիոն ռազմավարության հիմնական ուղղություններն են՝

- կրթական և ուսումնական գործունեությունը,
- գիտական գործունեությունը,
- դիմորդների հավաքագրումը և ընդունելությունը (բակալավրիատ, մագիստրատուրա, ասպիրանտուրա),
- դասախոսական և վարչակառավարչական անձնակազմի վերապատրաստումները,
- միջազգային համագործակցությունը,

- ֆինանսների կառավարումը,
- նյութատեխնիկական բազայի ամրապնդումը և Համալսարանի ենթակառուցվածքների բարելավումը:
- օրենքով սահմանված կարգով ներքին աուդիտի կառույց ստեղծելը:

Հիմնական խնդիրներ. Համալսարանի հակակոռուպցիոն ծրագրի իրականացման նպատակով առանձնացվել են հետևյալ հիմնական խնդիրները: Դրանք են՝

1. կատարելագործել Համալսարանի կառավարման համակարգը, բարձրացնել դրա արդյունավետությունը,
2. բարձրացնել Համալսարանի կառավարման գործընթացում կառույցների ղեկավարների անձնական պատասխանատվությունը,
3. իրականացնել կառավարման կառուցվածքային համակարգի բարեփոխումներ՝ Համալսարանի դինամիկ զարգացմանը զուգընթաց,
4. աջակցել կառավարման նոր մեթոդների ներդրմանը,
5. բարձրացնել Համալսարանի աշխատակազմի գործունեության վերաբերյալ Համալսարանի աշխատակիցների, ուսանողների և հանրության իրազեկվածությունը,
6. բարձրացնել գիտակրթական կառույցների գործունեության վերաբերյալ Համալսարանի աշխատակիցների, ուսանողների և հանրության իրազեկվածությունը,
7. բարձրացնել գիտամանկավարժական կադրերի գործունեության վերաբերյալ Համալսարանի աշխատակիցների, ուսանողների և հանրության իրազեկվածությունը,
8. ներդնել Համալսարանի գործունեության տարբեր ուղղությունների կառավարման էլեկտրոնային համակարգ,
9. մշտապես կատարելագործել ֆինանսական միջոցների կառավարման արդյունավետությունը,
10. աջակցել Համալսարանում հակակոռուպցիոն քաղաքականության իրականացմանը բոլոր մակարդակներում և յուրաքանչյուր օղակում, ներառյալ՝ ինքնակառավարվող մարմիններում:

Հիմնական մեթոդներ. Համալսարանի հակակոռուպցիոն ծրագրի իրականացման հիմնական մեթոդներ են՝

- զարգացման քաղաքականության մեջ կոռուպցիոն ռիսկերի շարունակական բացահայտումն ու կանխարգելումը,

- համալսարանի կառավարման թափանցիկության, հրապարակայնության, հաշվետվողականության և օրինականության ամրապնդումը:

Գործողություններ. հաշվետու ժամանակաշրջանում վերը նշված նպատակներին հասնելու և դրանցից բխող խնդիրներն իրականացնելու համար Համալսարանում՝

- գործողության մեջ են դրվել Համալսարանի 10 ֆակուլտետների (ներառյալ՝ ներֆակուլտետային ամբիոնների), համահամալսարանական բոլոր ամբիոնների, Համալսարանի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների ռազմավարությունները (հայեցակարգերը և զարգացման ծրագրերը): Այդ փաստաթղթերի կիրառումը Համալսարանի կառավարման բոլոր մակարդակներում

և կառույցներում քննարկվել է գիտական խորհրդում և ընթացքը արժանացել է հավանության: Ռազմավարությունները ներառում են կառուցակարգեր, որոնք միտված են Համալսարանի ենթակառուցվածքների զարգացմանը, կառավարման համակարգի օպտիմալացմանը, կրթական գործունեության արդիականացմանը, գիտական և նորարարական գործունեության զարգացմանը, Համալսարանում իրականացվող մտավոր գործունեության արդյունքների փոխանցմանը և առաջանցիկ կրթական պրակտիկաների տարածմանը, Համալսարանի կադրային ներուժի զարգացմանը, Համալսարանի սոցիալական համագործակցության զարգացմանը:

- ապահովվել է գործառնական (ընթացակարգերին վերաբերող) և վարչական (երբ խախտվում կամ վերապահորեն են կիրարկվում իրավական նորմերը) կոռուպցիոն ռիսկերը զգալիորեն նվազեցնող կառուցակարգեր,
- վերանայվել են կառուցվածքային ստորաբաժանումների աշխատողների շուրջ 80 տոկոսի աշխատատեղերի նկարագրերը, որոնք բխում եմ այդ ստորաբաժանումների կանոնադրական դրույթներից,
- շարունակվել է Համալսարանի Հենակետային վարժարանի և հիմնական դպրոցի զարգացման 2014-2018թթ. ռազմավարական ծրագրի իրականացումը, որը պարբերաբար քննարկվել է Համալսարանի կառավարման բոլոր մակարդակներում և համապատասխան կառույցներում,
- կիրառվել են ֆակուլտետի դեկանի ընտրության կարգը, ամբիոնի վարիչի ընտրության կարգը, պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգը, ատենախոսության թեմայի և ատենախոսության գիտական ղեկավարի հաստատման ժամանակավոր կարգը և մի շարք այլ փաստաթղթեր, որոնք սահմանում են գործառնական (ընթացակարգերին վերաբերող) և վարչական (երբ խախտվում կամ վերապահորեն են կիրարկվում իրավական նորմերը) կոռուպցիոն ռիսկերը զգալիորեն նվազեցնող կառուցակարգեր,
- ՀՀ Կառավարության 2013թ. մայիսի 13-ի թիվ 471-Ն որոշմամբ հաստատված Համալսարանի Կանոնադրությունում փոփոխությունները և լրացումները նվազեցրել են Համալսարանի կանոնադրական դրույթների անհամապատասխանությունը արտաքին միջավայրին և դրա արագ փոփոխությանը: Ինչպես 2014թ., այնպես էլ 2015թ. ընթացքում նպաստել է նաև Համալսարանի ռազմավարական նպատակներին հասնելուն, նախկինում ձևավորված կանոնադրական խոչընդոտների հաղթահարմանը և հնարավոր կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը բոլոր մակարդակներում: Կանոնադրական փոփոխությունները հանգեցրել են Համալսարանի գիտակրթական կառույցների (ամբիոններ, ֆակուլտետներ, հետազոտական և գիտական լաբորատորիաներ, ինստիտուտներ) ինքնակառավարման ամրապնդմանը, գործառնական իրավասության վերաբաշխմանը,
- աշխատավարձի մակարդակը 2015թ. ընթացքում մնացել է կայուն 2014թ. համեմատությամբ, իսկ 2013թ. համեմատությամբ աճը կազմում է 92 տոկոս: Դա 2015թ. ընթացքում նպաստել է կադրերի արտահոսքի կտրուկ նվազմանը, աշխատողների շրջանում ապագայի վերաբերյալ վստահության մթնոլորտի ձևավորմանը, աշխատանքում օրինականությունն ապահովելու ձգտմանը, բարձր

որակավորում ունեցող անձանց ցանկությանը ներգրավվելու բուհի աշխատանքում և բազմաթիվ այլ դրական զարգացումների,

- իրականացվել է կրթահամակարգի բաղադրիչների վերանայումը և դրանց թափանցիկության ապահովումը: Այժմ կրթական չափորոշիչները, ուսումնական պլանները, ուսումնական ծրագրերը, ժամանակացույցերը, քննական հարցաշարերը և այլ անհրաժեշտ տեղեկատվությունը բաց են և մատչելի 7/24 սկզբունքով (7 օր, 24 ժամ) CiFile համակարգով, որը 2016թ. նախատեսվում է փոխարինել միջազգայնորեն ընդունված Google Classroom համակարգով:

- համապատասխան ցուցումների շրջանակում ամբողջությամբ վերակառուցվել է գիտելիքների գնահատման համակարգը, համալսարանի ներքին ուժերով մշակվել, ծրագրավորվել, ստեղծվել, ներդրվել և փորձարկվել է հեռակա ուսուցման համակարգում գիտելիքների գնահատման էլեկտրոնային CiFile համակարգը, որը 2016թ. նախատեսվում է փոխարինել միջազգայնորեն ընդունված Google Classroom համակարգով: Այդ համակարգերը նպաստում են հեռակա ուսուցման համակարգում կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը,

- պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի և ուսանողների համար ապահովվում է էլեկտրոնային գրականությունից օգտվելու լայն հնարավորություն. իրականացվել է համակարգչային և այլ տեխնոլոգիաների տեխնիկական վերազինում, ստեղծվել են համակարգչային նոր լսարաններ, պորտալներ, ընթերցասրահներ, գրադարանի հումանիտար գիտությունների ընթերցասրահը հագեցվել է նոր տեխնոլոգիաներով, այդ գործընթացը շարունակվելու է նաև 2016թ. ԷլԳրադ գրադարանային համակարգի ներդրմամբ: Այդ մեխանիզմները նվազեցնում են գրականության «բաժանման» և դասախոս-ուսանող կոռուպցիոն ռիսկերը,

- դեռևս 2013թ. սեփական ուժերով և միջոցներով իրականացված և ներդրված էլեկտրոնային դեկանատի պորտալները ապահովել են էլեկտրոնային կառավարումը ամբիոն - ֆակուլտետ – ուսումնական վարչություն տարածքում: Ամբողջությամբ կիրառվում է կրթության 3-րդ մակարդակում տվյալների էլեկտրոնային շտեմարանը: Էլեկտրոնային կառավարումը նվազեցնում է կոռուպցիոն ռիսկերը և բարձրացնում աշխատանքային, ֆինանսական ու գործառնական կարգապահությունը,

- կադրերի կառավարման բաժնում և հաշվապահությունում ներդրվել է ՀԾ համակարգը, ինչը ապահովում է կադրային ռեսուրսների և հաշվապահության էլեկտրոնային մշակումը միջազգային ստանդարտներին համապատասխանող միջավայր,

- արդյունավետ գործում է www.armspu.am ՎԵԲ-կայքը՝ իր ֆեյսբուքյան գլխավոր և հարակից էջերով, ուղեկցող բլոգերով: Կայքն իր կառուցվածքով և բովանդակությամբ իրենից ներկայացնում է տեղեկատվական, աշխատանքային և վերահսկողական գործիք: Այն զարգացման քաղաքականության մեջ կոռուպցիոն ռիսկերի շարունակական բացահայտման ու կանխարգելման գործուն միջոց է, ապահովում է համալսարանի կառավարման թափանցիկությունը, հրապարակայնությունը, հաշվետվողականությունը և օրինականության ամրապնդումը: Այսպես, www.armspu.am ՎԵԲ-կայքում զետեղված նյութերը բավարար արդյունավետ միջոց են Համալսարանի աշխատակազմի, գիտակրթական կառույցների և գիտամանկավարժական կադրերի գործունեության

վերաբերյալ Համալսարանի աշխատակիցների, ուսանողների և հանրության իրազեկվածությունը ապահովելու համար: Իսկ կայքին կապված կամ ուղեկցող էջերը անկախ տեղեկատվական աղբյուրներ են, որոնք կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում յուրահատուկ մեխանիզմներ և ցուցիչներ են: 2015թ. ընթացքում սկսվել են www.aspu.am բաձարձակապես նոր լուծումներով կայքի ստեղծման աշխատանքները, որի փորձարկումն ընթանում է, դեկտեմբեր ամսվա ընթացքում և նոր կայքը կշահագործվի 2016թ. հունվարից,

- արդյունավետ գործում է ՖԱՄԱ առաջին համալսարանական ռադիոն,

- ՀՊՄՀ գործունեության թափանցիկությունն ապահովվում է նաև «Մանկավարժ» թերթի միջոցով,

- մեկնարկել և հաջողությամբ ընթանում են միջազգային համագործակցության մի շարք ծրագրեր: Իսկ Ֆինլյանդիայի Օուլու համալսարանի հետ դեռևս 2013թ-ի դեկտեմբերի 12-ին Երևանում կայացած կոնֆերանսով ավարտված եռամյա համագործակցության ծրագիրն ունի նաև արդյունավետ շարունակություն: ՀՊՄՀ և Օուլու Համալսարանի ռեկտորների միջև 2014թ. նոյեմբերին կնքած համագործակցության նոր համաձայնագիրը ամբողջ ծավալով գործել է 2015թ. ընթացքում և շարունակելու է գործել 2016թ.: Դա վկայում է Համալսարանի կառավարչական, վարչական, ֆինանսատնտեսական, կրթական, գիտական, սոցիալական և այլ ոլորտներում գործունեության՝ որակի ապահովման միջազգայնորեն ընդունելի կանոնակարգերի և ընթացակարգերի համապատասխանության մասին,

- այժմ Համալսարանը ներգրավված է ՏԵՄՊՈՒՍ-ի յոթ ծրագրերում:

Նշված, ինչպես նաև տարբեր պետությունների (ՌԴ, Ուկրաինա, Լիտվա, Գերմանիա, Չեխիա, Դանիա, Շվեցիա, Ֆրանսիա, ԱՄՆ և այլն) բուհերի հետ կնքված բազմաթիվ միջբուհական և բազմակողմ պայմանագրերով Համալսարանը հնարավորություն է ստացել փորձի փոխանակմամբ և համագործակցության այլ եղանակներով ապահովել բուհի միջազգայնացման գործընթացը՝ համապատասխան ստանդարտների պահպանմանը: Դա նպաստում է նաև նոր միջավայրի ձևավորմանը,

- արդյունավետ է գործում նաև ներքին աուդիտի կառույցը, որի գործունեության արդյունքում վեր են հանվում, գնահատվում և քննարկվում տարբեր կառույցներում կոռուպցիոն և հնարավոր այլ ռիսկերը, դրանք համեմատվում են նախկինում եղած ռիսկերի հետ: Ցուցաբերվում է համալիր մոտեցում, ապահովվում է արդյունքների քննարկման թափանցիկությունը, ձևավորվում է նոր մթնոլորտ, որը հանգեցնում է Համալսարանի կառույցների և աշխատակիցների գործունեության օրինականության ամրապնդմանը,

- հակակոռուպցիոն ծրագրով նախատեսված է անվանի անձանց (գիտնականների, հրապարակախոսների, գրողների, հասարակական, քաղաքական, տնտեսության, մշակույթի ոլորտի գործիչների) հետ հանդիպումներ, կլոր սեղաններ: Դասախոսություններ կազմակերպելու միջոցով բարձրացնել ուսանողների գիտակցությունը, սերմանել իրավաչափ վարքագծի բարձր կուլտուրա, անհանդուրժողականության մթնոլորտ կոռուպցիոն երևույթների նկատմամբ, նման երևույթների դեմ պայքարելու գիտելիքներ, հմտություններ և կարողություններ: Մանկավարժական համալսարանում այդպիսի հանդիպումները կրում են

պարբերական բնույթ և առանձնանում են արդարության ու համամարդկային այլ բարձր արժեքների սերմանմամբ,

- հակակոռուպցիոն ծրագրի շրջանակում հատկապես կարևորվում է ինքնակառավարման մարմինների՝ ուսանողական խորհրդի, ուսանողական գիտական ընկերության և արհմիութենական կազմակերպության դերն ու նշանակությունը: Այդ կառույցների հետևողական գործունեությունն ապահովում է համալսարանի կառավարման թափանցիկությունը, հրապարակայնությունը, հաշվետվողականությունը և օրինականության ամրապնդումը,

- ռեկտորի հրամանով մշտապես ամփոփվում են Համալսարանի ռեկտորին առընթեր հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի մոնիթորինգի հանձնաժողովի գործունեության արդյունքները,

- իրականացվել են ընթացիկ այլ միջոցառումներ: